	<p>բազմազանությունը, համացանցի միջոցով կարգավորման ենթակա հնարավոր հարցերը: Ուսանողին կհանձնարարվի մուտք գործել ինտերնետային ծրագիր՝ փնտրել առաջադրված տվյալները, ներբեռնել, օգտագործել և պահպանել տվյալներ: Կառաջադրվի որոշակի տեղեկատվություն փոխանցել սոցիալական կայքերի միջոցով կամ բաշխել ըստ հասցեականության:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅՈՒՆ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԱՀ-2-5-20-001
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել բիզնես գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ գործնական հմտություններ: Դրանք ներառում են ինքնուրույն բիզնես կազմակերպելու և վարելու համար անհրաժեշտ գործողությունների իրականացման հմտություններ, որոնցում հաշվի է առնված ինչպես գործարար ոլորտին հատուկ սկզբունքները, այնպես էլ բիզնես գործունեությունը կարգավորող իրավական դաշտի առանձնահատկությունները
<b>Մոդուլի տևողությունը</b>	72 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 22 ժամ գործնական աշխատանք՝ 50 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլի 1 և 2 ուսումնառության արդյունքներն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չէ: Մյուս ուսումնառության արդյունքների ուսումնասիրությունը նպատակահարմար է իրականացնել որոշակի մասնագիտական մոդուլներ յուրացնելուց հետո, որպեսզի դրանց գործնական ձեռքբերումները օգտագործվեն համապատասխան ծրագրեր մշակելու համար:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

	1) ներկայացնի հիմնավորված բիզնես-գաղափարի ձևավորման գործընթացը 2) ներկայացնի կազմակերպության ստեղծման և գրանցման կարգը, կառավարման գործընթացը 3) կատարի շուկայի հետազոտման և գնահատման գործողություններ 4) բնութագրի կազմակերպության ռեսուրսները և գնահատի օգտագործման արդյունավետությունը 5) կատարել ծախսերի հաշվարկ, ձևավորի ապրանքի /ծառայության/ գինը 6) մշակի բիզնես պլան և գործողությունների ծրագիր 7) հաշվի հարկեր, տուրքեր, կազմի ֆինանսական հաշվետվություններ
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել հիմնավորված բիզնես-գաղափարի ձևավորման գործընթացը
<b>Կատարման չափանիշներ</b>	1) բիզնես-գործունեության էությունը ճիշտ է մեկնաբանում, 2) բիզնես-գործունեության տեսլականը, նպատակը և ռազմավարությունը ճիշտ է սահմանում, 3) բիզնես-գործունեության համար նախընտրելի անձնային հատկանիշների կարևորությունը հիմնավորում է, 4) բիզնես-գործունեության համար սեփական հնարավորությունների գնահատումը ճիշտ է, 5) բիզնես-գաղափարի էությունը ճիշտ է մեկնաբանում, 6) բիզնես-գաղափարի ձևավորման գործընթացի բաղադրիչների իմաստը ճիշտ է մեկնաբանում, 7) ըստ իրավիճակների հիմնավորում է ձևավորված բիզնես-գաղափարները, 8) բիզնես-գաղափարի տարբերակի գնահատումը ճիշտ է:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է խմբային քննարկումների և անհատական գործնական առաջադրանքների հիման վրա: Քննարկումների ընթացքում բացահայտվում է բիզնես-գաղափարի և բիզնես-գործունեության հիմնական հասկացությունների վերաբերյալ ուսանողների յուրացրած գիտելիքների մակարդակը, իսկ գործնական հանձնարարությունների միջոցով նրանք ըստ իրավիճակի ներկայացնում և հիմնավորում են կոնկրետ բիզնես-գաղափար, որոշակիացնում են իրենց նախընտրած գործունեության տեսակը: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները

	<p>Բիզնես-գաղափարը որպես բիզնես-գործունեության մեկնակետ, դրա ձևավորման նախադրյալները: Բիզնես-գաղափարի իրատեսությունը հիմնավորող ցուցիչները: Օրենսդրական դաշտի պահանջները հաշվի առնելու կարևորությունը: Գործարար միջավայրի օբյեկտիվ գնահատման կարևորությունը և մոտեցումները: Սեփական գործարար հնարավորությունների բացահայտումը և անաչառության կարևորությունը: Բիզնես-գործունեության համար նախընտրելի ոլորտի ընտրությունը: Տեսլականի, նպատակի և ռազմավարության հստակ և հիմնավորված ձևակերպումը: Վերջնական բիզնես-գաղափարի գնահատումը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե քննարկումների ընթացքում ուսանողը ցուցաբերում է հիմնավորված եզրահանգումներ անելու ունակություն, իսկ գործնական առաջադրանքների ընթացքում ներկայացնում է տվյալ իրավիճակում առավել նախընտրելի ու հիմնավորված լուծումներ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Պարապմունքների անհրաժեշտ փուլերում անհրաժեշտ է կիրառել մտազրոհի տեխնիկան՝ հետագա քննարկման ուղղությունները ձևավորելու համար:</p> <p>Անհրաժեշտ է ունենալ ֆլիպչարտ, գունավոր թղթեր, ամրակներ, տարբեր գույնի մարկերներ, ուսուցողական իրավիճակների նկարագրեր, բիզնես-գաղափարների հաջողված օրինակներ, տեսլականի, նպատակի և ռազմավարության ուսուցողական ձևակերպումներ՝ նաև ոչ հստակ ձևակերպված:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Ներկայացնել կազմակերպության ստեղծման և գրանցման կարգը, կառավարման գործընթացը
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) կազմակերպության կազմակերպչա-իրավական ձևերի բնութագիրը ճիշտ է,</li> <li>2) կազմակերպության աշխատանքը կարգավորող իրավական ակտերի պահանջների ընկալումը ճիշտ է,</li> <li>3) կազմակերպության ստեղծման քայլերի հաջորդականությունը ճիշտ է մեկնաբանում,</li> <li>4) կազմակերպության ստեղծման համար պահանջվող փաստաթղթերի ձևավորումը ճիշտ է,</li> <li>5) կազմակերպության կառավարման անհրաժեշտությունը և խնդիրները ճիշտ է մեկնաբանում,</li> <li>6) կառավարման ֆունկցիաների բնութագրերը ճիշտ է,</li> </ol>



	<p>7) կառավարման ոճերի բնութագրերը ճիշտ է,</p> <p>8) կառավարման ֆունկցիոնալ բաժինների ձևավորման մոտեցումները ճիշտ է,</p> <p>9) աշխատատեղերի ձևավորման և պարտականությունների բաշխման մոտեցումները հիմնավոր է,</p> <p>10) աշխատողների ընտրության կարգը հիմնավոր է,</p> <p>11) կազմակերպության կառավարմանն առնչվող փաստաթղթերի ձևավորումը ամբողջական և հիմնավոր է,</p> <p>12) կնքվելիք պայմանագրերի կազմը և բովանդակությունը իրավաբանորեն ճիշտ է,</p> <p>13) կառավարման արդյունավետության գնահատման մոտեցումները հիմնավոր է:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարականների հիման վրա: Թեստերի միջոցով ստուգվում է տարբեր կազմակերպչա-իրավական ձև ունեցող կազմակերպությունների, դրանց կառավարման առանձնահատկությունների վերաբերյալ ուսանողի գիտելիքները, իսկ գործնական հանձնարարությունների միջոցով ուսանողը պետք է տրված պայմաններին համապատասխան կազմի տարբեր փաստաթղթեր: Գործնական հանձնարարությունները նպատակահարմար է առաջադրել ըստ ուսուցման փուլերի:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Կազմակերպության հասկացությունը և բնութագիրը: Կազմակերպությունների տիպերը, դրանց բնութագրիչ առանձնահատկությունները: Կազմակերպությունների ստեղծման ու գրանցման կարգը: Գործընթացի օրենսդրական կարգավորումը: Կազմակերպության կանոնադրությունը: Կազմակերպության կառավարման խնդիրները, ֆունկցիաները: Կառավարման ոճերը, դրանց առանձնահատուկ գծերը: Կառավարման ապարատի կառուցվածքը, ստորաբաժանումները: Կառավարման բաժինների առանձնացման սկզբունքները: Աշխատանքի բաժանման անհրաժեշտությունը, աշխատատեղերի ձևավորման մոտեցումները տարբեր մեծության կազմակերպություններում: Կազմակերպության փաստաթղթային տնտեսության ընդհանուր բնութագիրը, փաստաթղթերի ձևավորման կարգը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե թեստային առաջադրանքները կատարվում է հիմնականում ճիշտ, ոչ էական թերություններով, իսկ գործնական առաջադրանքները տրված պայմաններին համապատասխան կատարվում է ճիշտ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում</p>

	<p>անհրաժեշտ է կիրառել առանձին իրավիճակների խմբային քննարկումներ:</p> <p>Անհրաժեշտ է ունենալ ուսումնական ու ցուցադրական նյութեր, տարբեր փաստաթղթերի նմուշներ, առանձին կազմակերպություններում աշխատանքի բաժանման, աշխատողների ֆունկցիաների սահմանման օրինակներ:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Կատարել շուկայի հետազոտման և գնահատման գործողություններ
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է մեկնաբանում «շուկա» հասկացությունը,</li> <li>2) շուկայի հետազոտման անհրաժեշտությունը հիմնավորում է,</li> <li>3) շուկայի հետազոտման հիմնական ուղղությունները բացահայտում է,</li> <li>4) շուկայի հետազոտման գործընթացի փուլերը ճիշտ է բնութագրում,</li> <li>5) ըստ փուլերի շուկայի հետազոտման մեթոդների ընտրությունը հիմնավոր է,</li> <li>6) շուկայական պահանջարկի ծավալի բացահայտման մոտեցումները ճիշտ է,</li> <li>7) շուկայի վրա ազդող գործոնների և գնորդի վարքագծի գնահատումը ճիշտ է,</li> <li>8) շուկայական մրցակցության գնահատումը հիմնավոր է,</li> <li>9) շուկայի հատվածավորումը իրատեսական է,</li> <li>10) մարքեթինգի գաղափարների /4P և 7P/ նշանակությունը ճիշտ է բացահայտում,</li> <li>11) մարքեթինգային ռազմավարության մշակման մոտեցումները հիմնավորված է:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է թեստային առաջադրանքների, խմբային քննարկումների և գործնական հանձնարարությունների հիման վրա: Թեստերի միջոցով ստուգվելու է շուկայի վերաբերյալ հիմնական հասկացությունների ճիշտ ընկալման ուսանողի կարողությունը, իսկ գործնական առաջադրանքների միջոցով նա կատարելու է իրավիճակին համապատասխան եզրահանգումներ /հնարավորության դեպքում կարող են օգտագործվել նաև ուսանողների ինքնուրույն դիտարկումների ու հետազոտությունների արդյունքները/:</p> <p>Արդյունքները անհրաժեշտ է քննարկել խմբում:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p>

	<p>Շուկայի բնութագիրը: Շուկայի հետազոտության անհրաժեշտությունը և հիմնական ուղղությունները: Շուկայի հետազոտության գործընթացը: Շուկայական պահանջարկի գնահատումը: Շուկայի վրա ազդող գործոնները, գնորդի վարքագիծը: Մրցակցություն, դրա գնահատումը: Շուկայի հատվածավորումը: Մարքեթինգի 4 և 7 P-երը: Մարքեթինգային ռազմավարության էությունը և մշակման կարևորությունը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե ուսանողը թեստային և գործնական առաջադրանքները ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում, իսկ խմբային քննարկումների ընթացքում ցուցաբերում է իրավիճակին հիմնավորված արձագանքելու ունակություններ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Ամբողջ ուսուցման ընթացքում ըստ իրավիճակների անհրաժեշտ է կիրառել մտազրոհի տեխնիկան:</p> <p>Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, շուկայական իրավիճակների նկարագրեր, տիպական իրավիճակներում առավել հիմնավորված լուծումների օրինակներ, գործնական կիրառություն ունեցող փաստաթղթերի նմուշներ:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 8 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Բնութագրել կազմակերպության ռեսուրսները և գնահատել օգտագործման արդյունավետությունը
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) կազմակերպության ռեսուրսների կազմը և կառուցվածքը ճիշտ է բացահայտում,</li> <li>2) կազմակերպության ռեսուրսների խմբերի միջև օպտիմալ հարաբերակցության ապահովման անհրաժեշտությունը հիմնավորում է,</li> <li>3) նյութական ռեսուրսների խմբերի տնտեսագիտական բնութագրերը ճիշտ է,</li> <li>4) աշխատանքային ռեսուրսների բնութագիրը և դրանց առընչվող ցուցանիշների մեկնաբանությունը ճիշտ է,</li> <li>5) աշխատանքի տեխնիկական նորմավորման էությունը ճիշտ է բացատրում, նորմաների մեծության ձևավորման մեխանիզմը ճիշտ է ներկայացնում,</li> <li>6) ֆինանսական ռեսուրսների հետ կապված հասկացությունների բացատրությունը ճիշտ է,</li> <li>7) ֆինանսական ռեսուրսների համալրման աղբյուրների առանձնահատկությունները ճիշտ է մեկնաբանում,</li> <li>8) ռեսուրսների պահանջվելիք մեծության հաշվարկման մոտեցումները հիմնավոր է,</li> </ol>

	<p>9) հիմնական կապիտալի առանձին խմբերի օգտագործման արդյունավետության ցուցանիշների հաշվարկը և արդյունքների գնահատումը ճիշտ է,</p> <p>10) շրջանառու կապիտալի օգտագործման արդյունավետության ցուցանիշների հաշվարկը և արդյունքների գնահատումը ճիշտ է,</p> <p>11) աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետության ցուցանիշների հաշվարկը և արդյունքների գնահատումը ճիշտ է,</p> <p>12) ռեսուրսների օգտագործման վերաբերյալ պարզ վերլուծական գործողությունները և ըստ արդյունքների եզրահանգումները հիմնավոր է:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է խմբային քննարկումների և գործնական առաջադրանքների հիման վրա: Ուսանողներին հանձնարարվելու է ըստ ռեսուրսների տարբեր խմբերի հաշվել առավել ընդհանուր նշանակություն ունեցող ցուցանիշները: Նպատակահարմար է գործնական առաջադրանքները հանձնարարել փուլերով՝ ըստ ռեսուրսների խմբերի: Քննարկումների ընթացքում նրանք ոչ միայն գնահատելու են ստացված արդյունքները, այլ նաև առաջարկելու են լուծումների սեփական տարբերակները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Կազմակերպության ռեսուրսների ընդհանուր բնութագիրը: Նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսներ, դրանց կազմը: Հիմնական կապիտալ և շրջանառու կապիտալ: Ֆինանսական ռեսուրսներ: Ռեսուրսների մեծությունը բնութագրող ցուցանիշները: Ռեսուրսների օգտագործման մակարդակը բնութագրող ցուցանիշները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե առաջադրանքները մեթոդապես ճիշտ են կատարվում:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, գործնական հանձնարարությունների փաթեթներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 5</b>	Կատարել ծախսերի հաշվարկ, ձևավորել ապրանքի /ծառայության/ գինը
<b>Կատարման չափանիշներ</b>	1) «Ծախս» հասկացության բովանդակությունը ճիշտ է մեկնաբանում,

	<p>2) տարբերակում է ծախսերի խմբերը,</p> <p>3) ծախսերը հիմնավորող փաստաթղթերի տեսակները և վավերապայմանները ճիշտ է ներկայացնում,</p> <p>4) ծախսերի տարբեր խմբերի հաշվապահական ձևակերպումները ճիշտ է,</p> <p>5) ապրանքների տարբեր տեսակների և ծառայությունների տարբեր խմբերի համար պահանջվող ծախսերի կազմը հիմնավոր է ներկայացնում,</p> <p>6) ապրանքի կամ ծառայության ինքնարժեքի մեջ ներառվող ծախսերի հոդվածները ճիշտ է ներկայացնում,</p> <p>7) ինքնարժեքի տարբեր հոդվածների մեծության հաշվարկման մեթոդաբանությունը ճիշտ է կիրառում,</p> <p>8) հաշվում է ապրանքի կամ ծառայության միավորի ինքնարժեքը,</p> <p>9) ինքնարժեքի իջեցման հնարավորությունները ճիշտ է գնահատում,</p> <p>10) ինքնարժեք-շուկայական գին մարժայի տարբերության հիմնավորումը ճիշտ է,</p> <p>11) անհատական գնից շուկայական գնի անցման տրամաբանությունը բացատրում է:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է շարունակական գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողներին հանձնարարվելու է ըստ ծախսերի առանձին հոդվածների կատարել միավոր արտադրանքի կամ ծառայության համար դրանց հաշվարկներ և որոշել ինքնարժեքն ու գինը:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցման հետ կապված ծախսերի հասկացությունը: Ուղղակի և անուղղակի ծախսեր, կայուն և փոփոխական ծախսեր: Ծախսերի մեծության հաշվարկման մեթոդաբանությունը: Ծախսերի հաշվապահական ձևակերպման կարգը: Անալիտիկ և սինթետիկ հաշվառման կազմակերպումը: Միավորի ինքնարժեքի ծախսային հոդվածները: Ինքնարժեքի հաշվարկը: Շահույթի նորմայի հասկացությունը և կիրառումը: Արտադրանքի գնի մեծության հաշվարկը: Անհատական գնից շուկայական գնին անցման գործընթացը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե հաշվարկները կատարվում է ճիշտ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, մեթոդական ցուցումներ, գործնական հանձնարարությունների փաթեթներ, հաշվարկների կատարման ընթացքում օգտագործվող օրինակելի ձևաթղթեր:</p>

<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 6</b>	Մշակել բիզնես պլան և գործողությունների ծրագիր
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) բիզնես գործունեության համար բիզնես պլանի անհրաժեշտությունը հիմնավորում է,</li> <li>2) բիզնես պլանի բաժինների բովանդակության մեկնաբանությունները ճիշտ է,</li> <li>3) բիզնես պլանի մշակման համար անհրաժեշտ ելակետային տվյալների կազմը և ձեռք բերման աղբյուրները ճիշտ է ներկայացնում,</li> <li>4) ճիշտ է կատարում SWOT վերլուծություն,</li> <li>5) SWOT վերլուծության արդյունքները կիրառում է բիզնես պլանը մշակելու գործընթացում,</li> <li>6) բիզնես պլանով նախատեսվող միջոցառումները հիմնավորված է,</li> <li>7) բիզնես պլանի կատարումն ապահովող գործողությունների ծրագիրը, ժամանակացույցը հիմնավոր է,</li> <li>8) բիզնես պլանի կատարումն ապահովող ռեսուրսների մեծությունները ճիշտ է սահմանվել,</li> <li>9) բիզնես պլանով նախատեսված միջոցառումների իրականացման ռիսկերը և դրանց հաղթահարման քայլերը հիմնավոր են:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է կազմված բիզնես պլանի հիման վրա, որում պետք է արտացոլված լինեն նախատեսված բիզնես գործունեության վերաբերյալ բոլոր հայտնի տեղեկությունները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Բիզնես պլանի բովանդակությունը և բաժիններում ներառվող հարցերը: Բիզնես պլանի կազմման համար անհրաժեշտ ելակետային տվյալները, դրանց աղբյուրները: SWOT վերլուծության արդյունքների կիրառումը պլանը կազմելու ժամանակ: Բիզնես պլանի կատարման գործողությունների ծրագիրը, դրա կազմման մոտեցումները: Գործողությունների ժամանակացույցը: Պլանի կատարման հնարավոր ռիսկերը, դրանց հաղթահարման միջոցառումները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե պլանը կազմված է ճիշտ և հիմնավորված:</p>

<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ քիզնես պլանի բովանդակությանը համապատասխան ձևաթղթեր, մեթոդական հանձնարարականներ, պլանը կազմելու համար օգտագործվող ելակետային տվյալներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 7</b>	Հաշվել հարկեր, տուրքեր, կազմել ֆինանսական հաշվետվություններ
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) հարկային օրենսդրության հիմնական դրույթները ճիշտ է մեկնաբանում,</li> <li>2) հարկային օրենսդրության հիմնական հասկացությունները ճիշտ է բացատրում,</li> <li>3) հարկերի և տուրքերի մեծությունը հաշվելու համար կիրառվող ելակետային ցուցանիշների հաշվարկը ճիշտ է կատարում,</li> <li>4) հարկերի և տուրքերի մեծությունը ճիշտ է հաշվարկում,</li> <li>5) հարկերի վճարման ժամկետների գնահատումը համապատասխանում է օրենսդրության պահանջներին,</li> <li>6) ֆինանսական հաշվետվությունների կազմը ճիշտ է ներկայացնում,</li> <li>7) անհրաժեշտ ֆինանսական հաշվետվությունները ճիշտ է լրացնում,</li> <li>8) ստուգումների իրականացման իրավական ակտերի պահանջները ճիշտ է բացատրում,</li> <li>9) ստուգումների հետ կապված տնտեսվարողի իրավունքներն ու պարտականությունները ճիշտ է ներկայացնում:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է շարունակական գործնական առաջադրանքների կատարման հիման վրա: Ուսանողներին հանձնարարվելու է հաշվել հարկերի և տուրքերի գումարները, լրացնել ֆինանսական հաշվետվություններ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Հայաստանի Հանրապետությունում կիրառվող հարկերի և տուրքերի տեսակները, դրանց տնտեսական նշանակությունը: Հարկային օրենսդրության հիմնական դրույթները: Հարկերի հաշվարկման կարգը և դրույքաչափերը: Հարկատուների պատասխանատվությունը հարկային օրենսդրության պահանջների պահպանման համար: Ֆինանսական հաշվետվությունների տեսակները, հաշվետվությունների լրացման և ներկայացման կարգը:</p>

	Ստուգումների անցկացումը, կարգը: Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքները ճիշտ է կատարում:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, հարկերի վերաբերյալ օրենքներ և նորմատիվ փաստաթղթեր, մեթոդական նյութեր, հաշվետվությունների ձևաթղթեր, հաշվարկները կատարելու համար օգտագործվող ելակետային նյութերի փաթեթներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԴԵՐ-5-20-001
<b>Մոդուլի նպատակը</b>	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել գիտելիքներ հոգեբանության ընդհանուր դրույթների վերաբերյալ, ինչպես նաև զարգացնել ինքնաճանաչման, ինքնավերլուծության կարողություններ, խթանել միջանձնային և միջխմբային հարաբերությունների կարգավորմանը:
<b>Մոդուլի տևողությունը</b>	72 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 42 ժամ գործնական աշխատանք՝ 30 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝  1) ներկայացնի հոգեբանությունը որպես գիտություն, նրա դերը և առանձնահատկությունները, անդրադառնա բաժիններին,  2) ներկայացնի հոգեբանության դրդապատճառները, խառնվածքի ու բնավորության տեսակներն ու առանձնահատկությունները, բարդույթ հասկացությունը,  3) կարգավորի միջանձնային և միջխմբային հարաբերությունները:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:



<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել հոգեբանությունը որպես գիտություն, նրա դերը և առանձնահատկությունները, անդրադառնալ բաժիններին
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ձևակերպում է հոգեբանությունը որպես գիտություն, 2) բացատրում է հոգեբանության դերը և առանձնահատկությունները, 3) մեկնաբանում է հոգեբանության բաժիններին՝ խնդիրներով և նպատակներով:
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի միջոցով, որի ժամանակ ուսանողին կտրվեն հարցեր հոգեբանության որպես գիտություն ձևավորման, դրա դերի և առանձնահատկությունների վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>• հոգեբանության՝ որպես առանձին գիտության ձևավորվելու պատմությունը,</li> <li>• հոգեբանության կառուցվածքը,</li> <li>• հոգեբանության բնագավառները,</li> <li>• հոգեբանության բաժինները,</li> <li>• հոգեբանության ուսումնասիրած խնդիրները և նպատակները:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հարցերին պատասխանում է ոչ էական թերություններով:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մասնագիտական գրականություն, ուսումնական ձեռնարկներ, անհրաժեշտության դեպքում՝ լուսապատկեր (սլայդ), համացանց, համակարգիչ, տեսագրիչ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 14 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Ներկայացնել հոգեբանության դրդապատճառները, խառնվածքի ու բնավորության տեսակներն ու առանձնահատկությունները, բարդույթ հասկացությունը
<b>Կատարման չափանիշներ</b>	1) նշում է հոգեբանության դրդապատճառները, 2) մեկնաբանում է խառնվածքի ու բնավորության տեսակները և առանձնահատկությունները,

	3) բնութագրում է բարդույթ հասկացությունը:
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումը կիրականացվի հար ու պատասխանի և գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր հոգեբանության դրդապատճառների, բարդույթի վերաբերյալ, ինչպես նաև կհանձնարարվի բնութագրել խառնվածքի ու բնավորության տեսակները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• հոգեբանության դրդապատճառները,</li> <li>• խառնվածք հասկացությունը, տեսակները,</li> <li>• բնավորություն հասկացությունը, տեսակները,</li> <li>• բարդույթ հասկացության սահմանումը, տեսակները,</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հարցերին պատասխանում է ոչ էական թերություններով և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքը:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների, զրույցի, խմբային քննարկումների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մասնագիտական գրականություն, ուսումնական ձեռնարկներ, անհրաժեշտության դեպքում՝ համացանց, համակարգիչ, տեսացրիչ, լուսապատկեր (սլայդ):
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 14 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 10 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Կարգավորել միջանձնային և միջխմբային հարաբերություններ
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) մեկնաբանում է միջանձնային հարաբերությունների առանձնահատկությունները,</p> <p>2) մեկնաբանում է միջխմբային հարաբերությունների առանձնահատկությունները,</p> <p>3) ամփոփում է միջանձնային և միջխմբային հարաբերությունները՝ որպես կոնֆլիկտային իրավիճակների լուծման, բանակցություններ վարելու և աշխատանքային առողջ մթնոլորտ ստեղծելու նախադրյալ:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումը կիրականացվի հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր միջանձնային և միջխմբային հարաբերությունների վերաբերյալ, ինչպես նաև կտրվի գործնական առաջադրանք կոնֆլիկտային իրավիճակների լուծման, բանակցություններ վարելու վերաբերյալ:

	<p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>միջանձնային հարաբերությունների ձևակերպումը, առանձնահատկությունները,</li> <li>միջանձնային հարաբերությունների տեսություններ և մոտեցումներ,</li> <li>միջխմբային հարաբերությունների ձևակերպումը, առանձնահատկությունները,</li> <li>կոնֆլիկտների սոցիալ-հոգեբանական բնութագիրը,</li> <li>աշխատանքային վարքագիծ և էթիկա:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հարցերին պատասխանում է ոչ էական թերություններով և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքը:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների, զրույցի, խմբային քննարկումների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մասնագիտական գրականություն, ուսումնական ձեռնարկներ, անհրաժեշտության դեպքում՝ համացանց, համակարգիչ, տեսացրիչ, լուսապատկեր (սլայդ):
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 14 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԴԵՐ-5-20-002
<b>Մոդուլի նպատակը</b>	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել ընդհանուր գիտելիքներ գեղագիտության վերաբերյալ, խթանել նրա գեղեցիկը տեսնելու և գնահատելու ունակությունը, կիրառելի դարձնել բարեկրթության և վարվեցողության ընդունված նորմերը, ձևավորել գեղագիտական ճաշակ և իդեալ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	72 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 46 ժամ գործնական աշխատանք՝ 26 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝</p> <p>1) ներկայացնի գեղագիտությունը որպես գիտություն, պատմական զարգացման հիմնական փուլերը,</p>

	<p>2) ներկայացնել էթիկայի պատմական զարգացումը, բարոյականության տեսակները,</p> <p>3) ներկայացնի գեղագիտության կատեգորիաները՝ դիտարկելով դրանց դրսևորումներն արվեստում և կենցաղում,</p> <p>4) տիրապետի բարեկրթության և վարվեցողության ընդունված նորմերին,</p> <p>5) ձևավորի գեղագիտական ճաշակ և իդեալ՝ հիմնվելով արվեստի վերաբերյալ ունեցած տեսական գիտելիքների և գործնական հմտությունների վրա:</p>
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել գեղագիտությունը որպես գիտություն, պատմական զարգացման հիմնական փուլերը
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) սահմանում է գեղագիտությունը որպես գիտություն,</p> <p>2) մեկնաբանում է գեղագիտության զարգացման ժամանակաշրջանները,</p> <p>3) վերլուծում է հայ գեղագիտական մտքի զարգացումը:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումը կիրականացվի հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի հիման վրա, որի ժամանակ ուսանողին կտրվեն հարցեր գեղագիտության՝ որպես գիտություն ձևավորման, զարգացման ժամանակաշրջանների վերաբերյալ, որպես գործնական առաջադրանք՝ կտրվի բնորոշել հայ գեղագիտական մտքի զարգացման փուլերը:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>գեղագիտությունը որպես գիտության առանձին ճյուղ,</li> <li>գեղագիտության պատմական զարգացման փուլերը. հին աշխարհից մինչև մեր օրեր,</li> <li>հայ գեղագիտական մտքի զարգացումը.</li> <li>հայ գեղագիտական մտքի պատմական փուլերը:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հարցերին պատասխանում է ոչ էական թերություններով և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքը:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների, զրույցի, խմբային

	քննարկումների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մասնագիտական գրականություն, ուսումնական ձեռնարկներ, անհրաժեշտության դեպքում՝ համացանց, համակարգիչ, տեսացրիչ, լուսապատկեր (սլայդ), տեսաֆիլմեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Ներկայացնել էթիկայի պատմական զարգացումը, բարոյականության տեսակները
<b>Կատարման չափանիշներ</b>	1) մեկնաբանում է էթիկան՝ որպես «գործնական փիլիսոփայություն», դրա ծագումն ու զարգացման ընթացքը, 2) նշում է բարոյականության տեսակները, 3) ամփոփում է բարոյականության տեսակների դրսևորումներն արվեստի և կենցաղի համատեքստում:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումը կիրականացվի հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի հիման վրա, որի ժամանակ ուսանողին կտրվեն հարցեր էթիկայի, բարոյականության վերաբերյալ, գործնական առաջադրանք՝ կտրվի բարոյականության տեսակների դրսևորումներն արվեստի և կենցաղի համատեքստում ներկայացնելու համար: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները. <ul style="list-style-type: none"> <li>• էթիկայի բնորոշումը, տեսակները,</li> <li>• էթիկայի ծագումն ու զարգացման պատմական փուլերը,</li> <li>• էթիկա և բարոյականություն. ստուգաբանությունը, սահմանումները,</li> <li>• բարոյականության տեսակները, դերը, գործառույթները և նշանակությունը,</li> <li>• բարոյականության տեսակների դրսևորումներն արվեստի և կենցաղի համատեքստում:</li> </ul> Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հարցերին պատասխանում է ոչ էական թերություններով և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքը:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների, զրույցի, խմբային քննարկումների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մասնագիտական գրականություն, ուսումնական ձեռնարկներ, անհրաժեշտության դեպքում՝ համացանց, համակարգիչ, տեսացրիչ, լուսապատկեր (սլայդ), տեսաֆիլմեր:

<b>Ուսուցման ժամաքանակը</b>	<b>Երաշխավորված</b> տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Ներկայացնել գեղագիտության կատեգորիաները՝ դիտարկելով դրանց դրսևորումներն արվեստում և կենցաղում
<b>Կատարման չափանիշներ</b>	1) նշում է գեղագիտության կատեգորիաները, 2) մեկնաբանում է գեղագիտության կատեգորիաների փոխկապակցվածությունը, 3) ամփոփում է դրանք արվեստի և կենցաղի համատեքստում:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումը կիրականացվի հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի հիման վրա, որի ժամանակ ուսանողին կտրվեն հարցեր գեղագիտության կատեգորիաների, դրանց փոխկապակցվածության վերաբերյալ, գործնական առաջադրանք կտրվի գեղագիտության կատեգորիաների դրսևորումները արվեստի և կենցաղի համատեքստում ներկայացնելու համար: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները. <ul style="list-style-type: none"> <li>• գեղագիտության կատեգորիաները,</li> <li>• գեղեցիկ-տգեղ, վեհ-նսեմ, ողբերգական-կատակերգական, բանաստեղծական-արձակ փոխադարձ կապը և ներգործությունը,</li> <li>• գեղագիտության կատեգորիաների դրսևորումներն արվեստում. օրինակներ և վերլուծություն,</li> <li>• գեղագիտության կատեգորիաների դրսևորումներն կենցաղում. օրինակներ և վերլուծություն:</li> </ul> Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հարցերին պատասխանում է ոչ էական թերություններով և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքը:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների, զրույցի, խմբային քննարկումների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մասնագիտական գրականություն, ուսումնական ձեռնարկներ, անհրաժեշտության դեպքում՝ համացանց, համակարգիչ, տեսացրիչ, լուսապատկեր (սլայդ), տեսաֆիլմեր:
<b>Ուսուցման ժամաքանակը</b>	<b>Երաշխավորված</b> տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ

<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Տիրապետել բարեկրթության և վարվեցողության ընդունված նորմերին
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) նշում է էթիկետի տեսակներն ու առանձնահատկությունները,</p> <p>2) գնահատում է մարդու առօրյան որպես գեղեցիկի դրսևորում,</p> <p>3) դիտարկում է էթիկայի կանոններն ու առանձնահատկությունները մշակութային միջավայր ձևավորելու համատեքստում:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումը կիրականացվի հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի հիման վրա, որի ժամանակ ուսանողին կտրվեն հարցեր էթիկետի տեսակների և առանձնահատկությունների վերաբերյալ, գործնական առաջադրանք կտրվի էթիկայի կանոններն ու առանձնահատկությունները մշակութային միջավայր ձևավորելու համատեքստում ներկայացնելու համար:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>• էթիկետի սահմանումը, տերմինի առաջացումը,</li> <li>• էթիկետի տեսակները, առանձնահատկությունները,</li> <li>• էթիկետի օրինակներ առօրյայից,</li> <li>• էթիկայի դերը, գործառույթները և նշանակությունը,</li> <li>• էթիկայի կանոնների օրինակներ առօրյայից,</li> <li>• էթիկան՝ մշակութային միջավայր ստեղծելու կարևոր նախապայման:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հարցերին պատասխանում է ոչ էական թերություններով և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքը:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների, զրույցի, խմբային քննարկումների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մասնագիտական գրականություն, ուսումնական ձեռնարկներ, անհրաժեշտության դեպքում՝ համացանց, համակարգիչ, տեսացրիչ, լուսապատկեր (սլայդ), տեսաֆիլմեր:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 10 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>

<b>Ուսումնառության արդյունք 5</b>	Ձևավորել գեղագիտական ճաշակ և իդեալ՝ հիմնվելով արվեստի վերաբերյալ ունեցած տեսական գիտելիքների և գործնական հմտությունների վրա
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) սահմանում է գեղագիտական ճաշակ և իդեալ հասկացությունները,</p> <p>2) մեկնաբանում է արվեստը՝ որպես մշակույթի բարձրագույն դրսևորում,</p> <p>3) գնահատում է արվեստի դերը գեղագիտական ճաշակ և իդեալ ձևավորելու համատեքստում:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումը կիրականացվի հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի հիման վրա, որի ժամանակ ուսանողին կտրվեն հարցեր ճաշակ և իդեալ հասկացությունների վերաբերյալ, գործնական առաջադրանք կտրվի արվեստի դերը գեղագիտական ճաշակ և իդեալ ձևավորելու համատեքստում ներկայացնելու համար:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>• գեղագիտական ճաշակ հասկացությունը,</li> <li>• գեղագիտական ճաշակը որպես ժամանակակից հասարակության մեջ անհատի կայացման գործոն,</li> <li>• գեղագիտական իդեալ հասկացությունը,</li> <li>• գեղագիտական իդեալի ձևավորման նախադրյալները,</li> <li>• արվեստը որպես գեղագիտական ճաշակ ձևավորելու նախադրյալ,</li> <li>• արվեստը որպես գեղագիտական իդեալ ձևավորելու նախադրյալ:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հարցերին պատասխանում է ոչ էական թերություններով և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքը:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների, զրույցի, խմբային քննարկումների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մասնագիտական գրականություն, ուսումնական ձեռնարկներ, անհրաժեշտության դեպքում՝ համացանց, համակարգիչ, տեսացրիչ, լուսապատկեր (սլայդ), տեսաֆիլմեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 8 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»</b>	



<b>Մոդուլի դասիչը</b>	ԴԵՐ-5-20-003
<b>Մոդուլի նպատակը</b>	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել ընդհանուր գիտելիքներ մշակութաբանության ծագման, զարգացման վերաբերյալ, ձևավորել միջմշակութային հաղորդակցության կարողություններ, նպաստել ազգային ինքնության գիտակցության ամրապնդմանն ու պահպանմանը:
<b>Մոդուլի տևողությունը</b>	72 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 48 ժամ գործնական աշխատանք՝ 24 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1) ներկայացնի մշակութաբանությունը որպես գիտություն ձևավորվելու անհրաժեշտությունը, ուսումնասիրման խնդիրները, գործառույթները,</li> <li>2) ներկայացնի մշակութային գործունեության հիմնական ձևերը, դրանց դրսևորման առանձնահատկությունները,</li> <li>3) ներկայացնի մարդու առաջացման վարկածներն ըստ մշակութաբանության, էթնոսների, ազգերի, քաղաքակրթությունների, պետությունների ձևավորումն ու զարգացումը,</li> <li>4) մեկնաբանի ենթամշակույթների առանձնահատկությունները, դիտարկել մշակույթը որպես հաղորդակցման միջոց,</li> <li>5) մեկնաբանի հայկական մշակույթը որպես ազգային ինքնության պահպանման և փոխանցման միջոց:</li> </ol>
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել մշակութաբանությունը որպես գիտություն ձևավորվելու անհրաժեշտությունը, ուսումնասիրման խնդիրները, գործառույթները
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) բացատրում է «մշակույթ» բառի պատմական զարգացման ընթացքը,</li> <li>2) վերլուծում է մշակութաբանությունը որպես առանձին գիտություն, ձևավորվելու անհրաժեշտությունը,</li> <li>3) ամփոփում է մշակութաբանության ուսումնասիրման խնդիրները, գործառույթները:</li> </ol>

<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումը կիրականացվի հարց ու պատասխանի հիման վրա, որի ժամանակ ուսանողին կտրվեն հարցեր մշակութաբանության՝ որպես առանձին գիտություն ձևավորման վերաբերյալ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>• «մշակույթ» բառի պատմական զարգացման ընթացքը,</li> <li>• մշակութաբանությունը որպես առանձին գիտություն,</li> <li>• մշակույթը որպես հասարակական երևույթ,</li> <li>• մշակութաբանության ուսումնասիրման խնդիրները, գործառույթները:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հարցերին պատասխանում է ոչ էական թերություններով:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների, զրույցի, խմբային քննարկումների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մասնագիտական գրականություն, ուսումնական ձեռնարկներ, անհրաժեշտության դեպքում՝ համացանց, համակարգիչ, տեսացրիչ, լուսապատկեր (սլայդ), տեսաֆիլմեր:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	<p>Ներկայացնել մշակութային գործունեության հիմնական ձևերը, դրանց դրսևորման առանձնահատկությունները</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) նշում է նյութական մշակույթի գործունեության ձևերը,</li> <li>2) նշում է հոգևոր մշակույթի գործունեության ձևերը,</li> <li>3) բացատրում է փիլիսոփայության և գիտության դերը մշակույթի համատեքստում,</li> <li>4) մեկնաբանում է կրոնի առանձնահատկությունը մշակույթի համատեքստում. համաշխարհային կրոնները, նրանց պատմամշակութային նշանակությունը,</li> <li>5) վերլուծում է ծեսը, ծիսակարգը և սովորույթը՝ որպես մշակույթի ժառանգման և փոխանցման միջոց,</li> <li>6) ամփոփում է արվեստի դերը մշակույթի համատեքստում:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումը կիրականացվի հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի հիման վրա, որի</p>

	<p>Ժամանակ ուսանողին կտրվեն հարցեր մշակույթի գործունեության ձևերի վերաբերյալ, կհանձնարարվի գրավոր վերլուծել արվեստի որևէ ստեղծագործություն՝ դիտարկելով այն մշակույթի համատեքստում:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>• նյութական մշակույթի գործունեության ձևերը,</li> <li>• հոգևոր մշակույթի գործունեության ձևերը,</li> <li>• մշակույթի ժառանգման և փոխանցման միջոցները,</li> <li>• արվեստը մշակույթի համատեքստում:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հարցերին պատասխանում է ոչ էական թերություններով և ճիշտ է վերլուծում հանձնարարված ստեղծագործությունը:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների, զրույցի, խմբային քննարկումների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մասնագիտական գրականություն, ուսումնական ձեռնարկներ, անհրաժեշտության դեպքում՝ համացանց, համակարգիչ, տեսացրիչ, լուսապատկեր (սլայդ), տեսաֆիլմեր:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	<p>Ներկայացնել մարդու առաջացման վարկածներն ըստ մշակութաբանության, էթնոսների, ազգերի, քաղաքակրթությունների, պետությունների ձևավորումն ու զարգացումը</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) նշում է մարդու առաջացման վարկածները մշակութաբանության տեսանկյունից,</p> <p>2) բացատրում է նախնադարից դեպի քաղաքակրթություն անցումը,</p> <p>4) վերլուծում է էթնոսի, ազգի ձևավորման դերը մշակույթի առաջացման և զարգացման համատեքստում,</p> <p>5) մեկնաբանում է քաղաքակրթությունների ձևավորման նշանակությունը մշակույթի զարգացման համատեքստում,</p> <p>6) մեկնաբանում է պետության առաջացման պատճառները:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումը կիրականացվի հարց ու պատասխանի և թեստի հիման վրա, որի ժամանակ ուսանողին կտրվեն հարցեր մարդու առաջացման վարկածների վերաբերյալ, կտրվի թեստ քաղաքակրթությունների, էթնոսի,</p>

	<p>ազգի, պետության վերաբերյալ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>մարդու առաջացման վարկածները մշակութաբանության տեսանկյունից,</li> <li>քաղաքակրթության ծաղկումը, հայտնի տեսությունները,</li> <li>էթնոսի ծագումն ու տերմինաբանությունը, առանձնահատկությունները,</li> <li>«ազգ» հասկացության սահմանումը, առանձնահատկությունները, ազգ և ժողովուրդ,</li> <li>պետության առաջացման վերաբերյալ տեսություններ,</li> <li>պետության դերը մշակույթի առաջացման և զարգացման համատեքստում:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և ճիշտ է կատարում թեստային առաջադրանքը:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների, զրույցի, խմբային քննարկումների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մասնագիտական գրականություն, ուսումնական ձեռնարկներ, անհրաժեշտության դեպքում՝ համացանց, համակարգիչ, տեսագրիչ, լուսապատկեր (սլայդ), տեսաֆիլմեր:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 10 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Մեկնաբանել ենթամշակույթների առանձնահատկությունները, դիտարկել մշակույթը որպես հաղորդակցման միջոց
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) պարզաբանում է ենթամշակույթների առանձնահատկությունները. ազգային, էթնոսար և զանգվածային մշակույթներ,</p> <p>2) մեկնաբանում է ազգային մշակույթի դերը միջմշակութային համակարգում,</p> <p>3) բացատրում է միջմշակութային հաղորդակցության առանձնահատկությունները,</p> <p>4) պարզաբանում է մշակույթ և հակամշակույթ հասկացությունները. վանդալիզմը որպես հասարակական երևույթ,</p> <p>5) ամփոփում է մարդու գործունեությունը որպես մշակութային երևույթ:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումը կիրականացվի հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի հիման վրա, որի

	<p>ժամանակ ուսանողին կտրվեն հարցեր ենթամշակույթների, միջմշակութային հաղորդակցության, մշակույթ և հակամշակույթ հասկացությունների վերաբերյալ, գործնական առաջադրանք կտրվի մարդու գործունեությունը որպես մշակութային երևույթ դիտարկելու նպատակով:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>• ենթամշակույթի բնորոշումը, առանձնահատկությունները,</li> <li>• ազգային, էթնոտար և զանգվածային մշակույթ,</li> <li>• միջմշակութային հաղորդակցության դերը մշակույթի զարգացման համատեքստում,</li> <li>• հակամշակույթի բնորոշումն ու ազդեցությունը. վանդալիզմը որպես հասարակական երևույթ,</li> <li>• Արևելքը և Արևմուտքը որպես տարբեր մշակութային միջավայրերի կրողներ,</li> <li>• մշակույթ-առօրեականություն կապը:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հարցերին պատասխանում է ոչ էական թերություններով և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքը:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների, զրույցի, խմբային քննարկումների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մասնագիտական գրականություն, ուսումնական ձեռնարկներ, անհրաժեշտության դեպքում՝ համացանց, համակարգիչ, տեսացրիչ, լուսապատկեր (սլայդ), տեսաֆիլմեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 5</b>	Մեկնաբանել հայկական մշակույթը որպես ազգային ինքնության պահպանման և փոխանցման միջոց
